Ուրախութեան հնչեցան ձայնք ընդ ծով, ցամաք ամենայն,
Եւ ի հրաշից Աստուածութեանն ի դող եկ տունն Ողիմպեան.
Պատառեցաւ, տեսիլ ահեղ, երկնից երկին կապուտակ,
Զերտ աղաւնի էջ Սուրբ Հոգին յիւր Էակիցն փառունակ։
Հայրն ի վերուստ վկայ յՈրդին կարդայր ի ձայն փարելի,
«—Դա ծոցածին և միածին, դա սիրելի իմ Որդի.
Դորա բանից լուիցեն ազգք, ընդ որ իմ է հաճութիւն,
Ծնողիս կամքք էջ Դա յերկնից համայն աղանց քաւութիւն»։
Ընդ բարբառոյն՝ արագաթև թռեաւ համբաւն հաշտութեան
Երկնի ընդ երկրի, և գունդագունդ զօրք լուսեղէն աննըման
Հեղան յերկիր սաւառնաթև, պար բոլորեալ գեղաւոր
Զորեքսրբեանն հնչեցին զօրհներգ ի քնար երկնաւոր։
Անդ և սպաս ածին ահիւ անմահ մարմնոյ Տէրունոյն,
Այլ նա յայնժամ ի յանապատ փութայր անդէն ի գետոյն.
Իսկ Յովհաննէս սիրաբորբոք քարոզ կարդայր բաղմութեան,
—«Էմմանուէլ ահա Աստուած դարուց հնչեալ յաւիտեան.
Ահա ձեզ Գառն Աբրահամեան պատրաստ խաչին ի սեղան,
Ահա սա զին մեր փրկութեան, զոր քարոզեաց իմ բերան.
Բուրվառ սրտից ածէք դմա զծուխս ծխել օրհնութեան,
Որում երկինք՝ են գահ, աթոռ, երկիր՝ ոտից պատուանդան»։
Այլ ինձ՝ տուր Տէր, տուր Տէր Յիսուս, յառատ քոյոց պարգևաց,
Հոգւով քեզ գահ լինել յաւէտ հանգոյն ջուրցն հոսանաց.
Իրրև զցօղոս կենսաշնթ հեղ յիս առատ քո շնորհ,
Եւ զիս հաղորդ արա փառաց սրբոյ դասուն երկնաւոր։

Ա—ՓՍ ԱՐԻՍ—ՓՍ Ա—ԷՓԻ ՓԻՆԱՂԵԱՆՑ.

Ի 6 Յ—ՆՎԵՐԻ 1872 —Դ.

Ի Բ—ՖՈ—։

1266-54

Հ.Ս.Խ. Հ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՆՈՒԷՐ

ԻՄ ՆՈՐԸՆԾԱՑ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Անուրանալի է, որ Կրօնի ուսումը որչափ որ ամենահարկաւոր է մեր Հայ երեխաներին՝ նոցա դաստիարակութեան ասպարիզի մէջ, նոյնչափ ևս արժանի է նա առանձին ուշադրութեան և հոգատարութեան քան թէ միւս ուսանելի առարկաները, ոչ թէ այն պատճառաւ, որ նորա ուսուցչութիւնը աւելի դժուար է, կամ նորա ուսուցչից պահանջվում է ևս առաւել մեծամեծ գիտութիւններ և հմտութիւններ, ոչ, այլ այն պատճառաւ, որ կրօնը սրտի և կամքի գործ լինելով՝ հարկաւոր են և նորա ուսուցչին սրտի զգացողութիւն, կամքի ներքին համոզումն և

ZUGA Арм.ССР

կենցաղավարութեան կենդանի, բարի օրինակներ, նոցա հետ միասին և առանձին խոհեմ ձեռնարկութիւններ ոչ սակաւ տարբեր միւս ուսանելի առարկաների ձեռնարկութիւններից և եղանակներից։ Ուստի և թարգմանեցի Ռուսերէնից Շ. Ֆարց անուն Գերմանացի հեղինակի հետևեալ յօդուածը, ընդհանրապէս կրօնի դաստուութեան մասին, յուսալով, որ ոչ սակաւ օգուտ կարող են քաղել և մեր ուսումնարանների կրօնուսոյցները, ի գործ դնելով նորա մէջ պարունակուած միջոցներից նրանք՝ որոնք յարմար և ձեռնտու են մեր ուսումնարանների ուղղութեանը և ոգւոյն։

ԴԱՍԱՍԱՑՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ.

Կրօնը, այս ինքն դիտակցական կապը մարդոյ Աստուծոյ հետ, չէ ոչ դիտութիւն և ոչ ճարտարութիւն. ուստի և չէ կարելի ուսանիլ նրան այս բառի հասարակ մտքովը. նա գործ է սրտի և կամքի, կամ լաւ ևս ասել՝ բանականութեան, և պարունակում է իւր մէջ նմանապէս բարոյականութիւն. այս պատճառաւ իմացական ընդունակութեան միջոցով՝ նորա զարգացման վերայ՝ միայն կողմնակի կերպով կարելի է ներգործել։ Կրօնի մէջ պէտք է կրթել՝ և ոչ ուսուցանել նրան։ Այս տեղ դասասացութեան եղանակներից շատերը անյարմար են, կամ գոնէ ուղղակից չեն այնպիսի յաջողակութեամբ՝ ինչպէս ուրիշ ուսանելի առարկայից մէջ։ Ընտանիքը 1), եկեղեցական ծիսակատարութիւնները 2), հասարակական բնաւորութիւնները, քաղաքական սովորութիւնները, ...

(1) Ցաւօք սրտի պէտք է ասել, որ շատ սակաւ են դասանում Հայոց մէջ այնպիսի ընտանիք, որոց մէջ երեխայն կարողանայ ընդունել մեր ...

ցանկացած պարզ և ուղիղ գաղափարները Հայաստանեայց կրօնի. նոցա մէջ ուսեալ և բարեկիրթ մայրեր սակաւ գտնուելու պատճառաւ, որոնցից կախուած է մի ընտանիքի ուղղութիւնը և բարեկարգութիւնը ըստ ամենայն մասանց և որ առաւել վնասաբերն է, ինչպէս ես ինքս ականատես եղած եմ, շատերը մեր Հայ հարուստ ընտանիքներից պահում են իւրեանց մանուկների դաստիարակութեան համար այլազգի և այլադաւան դաստիարակուհի մեծամեծ վարձքով, որը ի հարկէ մանուկների այլևայլ ուսմանց և բարոյականութեան վերայ ազդեցութեան հետ միասին՝ նոցա կրօնական զգացմաց վերայ ևս կարող է ազդեցութիւն ունենալ, մինչդեռ այն վարձքովը, որը վճարում էին այն այլադաւան դաստիարակուհոյն, այնպիսի հարուստներից մի քանիքը անգամ կարող էին բանալ մի օրինաւոր ազգային օրիորդական դպրոց, որի մէջ և պատրաստել մի քանի տարուայ ընթացքում ուսեալ Հայ դաստիարակուհիք, ինչպէս իւրեանց՝ նոյնպէս և հասարակաց զաւակներին մեր ազգային և կրօնական անխառն դաստիարակութիւնը մատակարարելու համար, առաւել ևս զարգացումն և պայծառազարդութիւն տալով Հայկական կեանքի սեպհական ազգային և կրօնական բնաւորութիւններին և սովորութիւններին, որոց պարզութեան ոգին և արժանաւորութիւնը աղօտացած է օտար ազդեցութիւններից։ Այս ամենի առաջն առնելու միակ միջոցը ի հարկէ կարող են լինիլ ազգային երկսեռ դպրոցները միայն, իւրեանց ազգային և կրօնական անխառն ոգւովը և ողջութիւնովը, որոց մասին հրաւիրում եմ ամենայն Հոգեբարձուաց և խնամատարների ուշադրութիւնը։

Ծ-ն. Թ-ր։

(2) Եկեղեցին որչափ որ իւր ներքին խորհրդովը սուրբ է, հոգևոր է և հասարակութեանը հոգևոր կերակուր մատակարարող, նոյնչափ ևս նորա արտաքին խորհրդակատարութիւնները, աղարողութիւնները և ծէսերը մանաւանդ թէ երգե-